

64 Եւ Տրդատ անցեալ գնաց յաշխարհն<sup>1</sup> իւր՝<sup>2</sup> յԱրարատեան գաւառ<sup>3</sup> ի Վաղարշապատ<sup>4</sup> քաղաք: 65 Իսկ սուրբն Գրիգոր մնաց<sup>5</sup> ժամանակս ինչ ի Տարան՝ ընդ իւր ունելով զնշխարս սրբոց<sup>6</sup> առաքելոցն, դադարեալ<sup>7</sup> աւուրս քսան եւ հինգ<sup>8</sup> ի վանս<sup>9</sup> Գլակայ, յիննակնեան տեղիսն Գիսանեայ<sup>10</sup> կռոցն<sup>11</sup>, ի կայանս<sup>12</sup> նշխարաց սրբոյ<sup>13</sup> Կարապետին:

66 Եւ առաքեաց զիշխանս<sup>14</sup> Մամիկոնէից տանն՝<sup>15</sup> տեսանել տեղի վայելուչ եւ լեռնաբնակ<sup>16</sup>. զոր երթեալ խուզեցին աւուրս բազումս եւ ոչ գտին տեղի պատշաճի<sup>17</sup> յամենայն<sup>18</sup> գաւառսն եւ<sup>19</sup> դարձան ունայն: 67 Իսկ սուրբն Գրիգոր հրամայեաց պաշտօնեիցն<sup>20</sup> աղաւթել<sup>21</sup> յերեկորեայ<sup>22</sup>: 68 Եւ ինքն մտեալ յեկեղեցին՝<sup>23</sup> տարածեաց զձեռնս իւր առաջի նշխարաց սրբոց առաքելոցն<sup>24</sup> եւ առաջի տապանի սուրբ<sup>25</sup> Կարապետին, եւ ինդրեաց յԱստուծոյ աղաւթիւք<sup>26</sup> այսպէս.

69<sup>27</sup> «Տէ՛ր Աստուած, բազմագութ եւ ողորմած, որ քննես<sup>28</sup> զիրաւունս եւ պարգեւես<sup>29</sup> զողորմութիւն, որ յիշեցեր զագգս մարդկան զմոռացեալսն<sup>30</sup> ի գթութեանց քոց, եւ<sup>31</sup> ոչ բարկացար իսպառ եւ ոչ անտես արարեր յաւիտեան, այլ կարգեցեր զիս ի պաշտման<sup>32</sup> քահանայութեանս այսմիկ՝ եւ ետուր մեզ ժամանակ<sup>2</sup> հատուցանել զպար-

1 *o* յաշխարհ

2 */ չիք* յաշխարհն իւր

3 */* գաւառ յԱրարատեան *իիս* յԱրարատեան գաւառ

4 *hmv չիք* գաւառ ի Վաղարշապատ

5 */* մնաց անդէն

6 *hmv* սուրբ

7 *m* դադարել, */* եւ դադարեաց *իիս* դադարեալ (*hsov*)

8 */* եւթն *իիս* հինգ

9 *im* վանս

10 *o* Գիսանէ, *h* Գիսանայ *իիս* Գիսանեայ (*lmsv*)

11 *hm* կռոց

12 *v* կայեան / *s* կայեանս

13 *o* սուրբ *իիս* սրբոյ

14 *h* զիշխան

15 *h* տան // զԵղիազար հանդերձ նախարարաւ մի *իիս* զիշխանս Մամիկոնէից տանս

16 */* լեռնակ *իիս* լեռնաբնակ

17 *s* պատշաճ / *o* ըստ պատշաճի

18 *v* ի յամենայն

19 */* բազում աւուրս խուզեցին զամենայն գաւառն եւ ոչ գտին տեղի ըստ պատշաճի *իիս* խուզեցին ... գաւառսն եւ (*2 տող*)

20 *h* պաշտօնեից

21 *hmv* աղաւթք առնել *իիս* աղաւթել (*iso*)

22 *sv* յերեկորեայ / *o* յերեկորեա

23 *h* եկեղեցին

24 *h* առաքելոց

25 */* ի պահարանս սրբոյ *իիս* եւ առաջի տապանի սուրբ

26 *hmsv չիք* աղաւթիւք (*io*)

27 *Այստեղ ք ունի զլուիս՝* Աղօթել սրբոյն Գրիգորի վասն ամփոփելոյ զնշխարս սրբոց Առաքելոցն

28 */* ընտրես *իիս* քննես

29 */* սիրես *իիս* պարգեւես

30 *hmsv* զմոռացեալս

31 *h չիք* եւ

32 *sv* պաշտաման, *h* պաշտում *իիս* պաշտման (*mo*)